



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 4

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Քննաթերթ

<i>Հարցեր 1-10</i>	<i>15 միավոր</i>
<i>Ինդիք 1</i>	<i>30 միավոր</i>
<i>Ինդիք 2</i>	<i>25 միավոր</i>
<i>Ինդիք 3</i>	<i>15 միավոր</i>
<i>Ինդիք 4</i>	<i>15 միավոր</i>
<i>Ընդամենը</i>	<i>100 միավոր</i>

Հունվար, 2026թ.

Քննական հարցերին պատասխանելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի՝ 31.08.2025թ.-ի գործող խմբագրությամբ սահմանված նորմերով, հաշվի առնելով նաև դրա եզրափակիչ և անցումային մասով նախատեսված դրույթները:

Քննական հարցերում օգտագործվում են հետևյալ հապավումները.

<u>Հապավում</u>	<u>Նշանակություն</u>
Հայաստանի Հանրապետություն	ՀՀ
ՀՀ Հարկային Օրենսգիրք	ՀՕ
AMD	ՀՀ դրամ
hAMD	հազար ՀՀ դրամ

Պահանջվում է բոլոր խնդիրների պատասխաններում նշել կատարված հաշվարկներն ամբողջությամբ:

Հարցեր Հարկային օրենսգրքից (ՀՕ)

1. Ինչ^օ իմաստ ու նշանակություն ունի «ֆինանսական ակտիվ» հասկացությունը.
ա. հաշվապահական հաշվառման համապատասխան միջազգային ստանդարտներով սահմանված ֆինանսական ակտիվ, բացառությամբ դրամական միջոցների, կրիպտոակտիվների,
բ. հաշվապահական հաշվառման համապատասխան միջազգային ստանդարտներով սահմանված ֆինանսական ակտիվ, բացառությամբ դրամական միջոցների,
գ. հաշվապահական հաշվառման համապատասխան միջազգային ստանդարտներով սահմանված ֆինանսական ակտիվ:

1 միավոր
2. Ինչ^օ իմաստ ու նշանակություն ունի «օտարում» հասկացությունը.
ա. մեկ անձից մեկ այլ անձի ապրանքի և (կամ) աշխատանքի կատարման արդյունքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում կամ ծառայության մատուցում՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի),
բ. մեկ անձից մեկ այլ անձի ապրանքի և (կամ) աշխատանքի կատարման արդյունքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում կամ ծառայության մատուցում՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի) կամ անհատույց,
գ. վերը նշված երկու պատասխանները սխալ են:

1 միավոր
3. Ինչ^օ իմաստ ու նշանակություն ունի «իրացման շրջանառություն» հասկացությունը.
ա. ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացման ենթակա ձեռնարկատիրական եկամուտ՝ դրամական արտահայտությամբ, որը չի ներառում ԱԱՀ, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները,
բ. ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացման ենթակա ձեռնարկատիրական եկամուտ՝ դրամական արտահայտությամբ, որը չի ներառում ԱԱՀ, ակցիզային հարկի գումարները,
գ. վերը նշված երկու պատասխանները սխալ են:

1 միավոր
4. Որն^օ է համարվում կազմակերպության գտնվելու վայր.
ա. կազմակերպության գլխամասային գրասենյակի գործունեություն վայրը,
բ. կազմակերպության գործունեության վայրը,
գ. կազմակերպության պետական գրանցման վայրը:

1 միավոր

5. Շահութահարկով հարկման բազան որոշելիս ակտիվները և (կամ) պարտավորությունները համարվում են օրենքով սահմանված կարգով վերագնահատված .

ա. եթե վերագնահատումը կատարվել է այն օրենքին համապատասխան, որով սահմանված է, որ ակտիվների և (կամ) պարտավորությունների վերագնահատումն իրականացվում է շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով,

բ. եթե վերագնահատումը կատարվել է այն օրենքին համապատասխան, որով սահմանված է, որ ակտիվների և (կամ) պարտավորությունների վերագնահատումն իրականացվում է շահութահարկի հաշվարկման նպատակով,

գ. վերը նշված երկու պատասխանները ճիշտ են:

1 միավոր

6. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից ՀՀ տարածքից դուրս ռեզիդենտին ապրանքի մատակարարումը .

ա. համարվում է եկամուտ,

բ. չի համարվում եկամուտ,

գ. համարվում է նվազեցվող եկամուտ:

1 միավոր

7. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում .

ա. ստացվող շահաբաժինները,

բ. ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները), աշխատանքները և ծառայությունները,

գ. վերը նշված երկու պատասխանները ճիշտ են:

1 միավոր

8. ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություններ արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառությունը հիմնավորվում է .

ա. սույն հարցի բ և գ կետերում նշված հայտարարությունը և հայտարարագիրը ներկայացնելու օրը,

բ. ապրանքների արտահանման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին արտահանողի լրացրած հայտարարությունը ներկայացնելու օրը,

գ. արտահանման հարկային հայտարարագիրը արտահանողի կողմից հարկային մարմին ներկայացնելու օրը:

1 միավոր

9. Եթե ԱԱՀ վճարողը միաժամանակ իրականացնում է ապրանքի ԱԱՀ-ից ազատված և ԱԱՀ-ով հարկվող մատակարարման գործարքներ, ապա .

ա. կարող է հարկային հաշվում ներառել 2 գործարքներն էլ,

բ. ԱԱՀ-ից ազատված գործարքի մասով կարող է դուրս գրել հաշիվ վավերագիր, իսկ ԱԱՀ-ով հարկվող գործարքի մասով՝ հարկային հաշիվ,

գ. վերը նշված երկու պատասխանները ճիշտ են:

1 միավոր

10. Կրիպտոակտիվի օտարման գործարքը .

ա. ազատված է ԱԱՀ-ից,

բ. հարկվում է ԱԱՀ-ի 20% դրույքաչափով,

գ. չի համարվում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ:

1 միավոր

11. Եկամտային հարկի ինչ՞ դրույքաչափով են հաշվարկվում ֆիզիկական անձի ստացված վարձակալական վճարները՝

ա. 10% դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարը 60 միլիոն դրամը գերազանցելու դեպքում, գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ՝ 10% դրույքաչափով,

բ. 10% դրույքաչափով,

գ. հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարը 60 միլիոն դրամը գերազանցելու դեպքում, ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ՝ 10% դրույքաչափով:

1 միավոր

12. Էուրոյամբ եզակի համարվող (յուրաքանչյուրն առանձնահատուկ հատկանիշներ ունեցող) և փոխարինելի չհամարվող կրիպտոակտիվի, ինչպես նաև ապակենտրոնացված գրանցամատյանի պահպանման կամ գործարքների վավերացման համար իրականացվող գործունեության արդյունքում ավտոմատ կերպով որպես պարզևատրում ստեղծված կրիպտոակտիվների օտարումից ստացվող.

ա. եկամուտները համարվում են նվազեցվող եկամուտ,

բ. եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է՝ մեկ տոկոս դրույքաչափով,

գ. եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է՝ 10% տոկոս դրույքաչափով:

1 միավոր

13. Բնապահպանական հարկով հարկման օբյեկտներ են համարվում՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների՝

ա. ՀՀ տարածք ներմուծումը,

բ. ներմուծող-իրացնողների և (կամ) արտադրող-իրացնողների կողմից ՀՀ տարածքում օտարումը,

գ. վերը նշված երկու պատասխանները ճիշտ են:

1 միավոր

14. Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝

ա. հաշվապահական գործունեություն իրականացնող կազմակերպությունները,

բ. իրավաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունները,

գ. վերը նշված երկու պատասխանները ճիշտ են:

1 միավոր

15. Հարկման ընդհանուր համակարգում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է՝

ա. 20 տոկոս դրույքաչափով,

բ. 23 տոկոս դրույքաչափով,

գ. 18 տոկոս դրույքաչափով:

1 միավոր

Խնդիր 1. Շահութահարկի վերաբերյալ

Հարկման ընդհանուր համակարգում գործող ՀՀ ռեզիդենտ «Կայան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) կատարում է արևային կայանների տեղադրման աշխատանքներ, ինչպես նաև մատակարարում է արևային կայանների բաղադրիչներ:

Ընկերության հաշվապահական հաշվառման համակարգում 2024 թվականի (այսուհետ՝ հաշվետու տարի) համար առկա է հետևյալ տեղեկատվությունը (համարակալման մեջ *-ով նշված է եկամտի կամ նվազեցման հետ կապված լրացուցիչ տեղեկատվության կետերի համարները):

		հAMD
	Գործարքներ/Եկամուտներ	Գումարը
1	Հասույթ՝ արևային կայանների տեղադրման աշխատանքներից	360,450
2*1	Հասույթ՝ արևային կայանների բաղադրիչների մատակարարումից	180,630
3*2	Հաճախորդի կողմից վնասված արևային պանելների հատուցումից եկամուտ	1,720
4	Ոչ ռեզիդենտ կազմակերպությանը տրված փոխառությունից ստացված տոկոսային եկամուտ	4,320
5	Ոչ ռեզիդենտ կազմակերպությանը ՀՀ տարածքից դուրս իրականացրած միջնորդական գործունեությունից	10,340
6*3	Ռեզիդենտ կազմակերպությանը անշարժ գույքի վարձակալության տրամադրելուց եկամուտ	750
7	ԱԱՀ պարտավորության կատարման համար պետական բյուջեից ստացված գումար	1,200
8	Երաշխիքային սպասարկման պահուստի հակադարձումից եկամուտ	8,620
9	Արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատման դրական արդյունք	7,540
Ընդամենը եկամուտներ		575,570

		Գումարը
	Գործարքներ/Նվազեցումներ	
1*4	Արևային կայանների տեղադրման աշխատանքների ինքնարժեք	276,320
2*5	Արևային կայանների բաղադրիչների ինքնարժեք	180,210
3*2	Հաճախորդի կողմից վնասված արևային պանելների ինքնարժեք	1,720
4*3	Ռեզիդենտ կազմակերպությանը անշարժ գույքի վարձակալության տրամադրելուց ծախսեր	580
5*6	Վարչական ծախսեր	21,640
6*7	Իրացման և մարկետինգային ծախսեր	19,750
7*8	Տոկոսային ծախսեր	19,830
8	Հիմնական միջոցների լուծարման ծախսեր	650
9*9	Ոչ արտադրական ծախսեր	1,870
10	ՀՀ Կառավարության սահմանած կարգով անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար պահուստին կատարված մասհանումներ	4,500
Ընդամենը նվազեցումներ		527,070

Լրացուցիչ տեղեկատվություն՝

- Հասույթը պակասեցված է Ընկերության կողմից նախորդ տարում վաճառված և հաշվետու տարում ճշգրտող հաշվով հետ ստացված 480 հAMD (առանց ԱԱՀ) արևային պանելների գումարով:
- Դատարանի կողմից Ընկերությանը վնաս պատճառած հաճախորդին մեղավոր ճանաչելու վերաբերյալ դատական ակտն ուժի մեջ մտնել 2025թ. -ին:
- Հաշվետու տարվա մարտ 1-ին Ընկերությունը ռեզիդենտ կազմակերպությունից 139,200 հAMD արժեքով (ներառյալ ԱԱՀ) սեփականության իրավունքով ձեռք է բերել արտադրական տարածք, որի ՀՕ

սահմանված կարգով որոշված անշարժ գույքի հարկով հարկման բազան և շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը գնման պահին կազմել են 189,600 հAMD և միաժամանակ այդ տարածքի $\frac{1}{4}$ մասը այլ ռեզիդենտ կազմակերպությանը հանձնել է վարձակալության մեկ տարի ժամկետով՝ ամսական 90 հAMD-ով (ներառյալ ԱԱՀ 20%): Այդ տարածքի հաշվապահական հաշվառմամբ մաշվածության ծախսը հաշվարկվել է 50 տարի ամորտիզացիոն օգտակար ծառայության ժամկետի կիրառմամբ, իսկ հարկային հաշվառման նպատակով Ընկերությունը կիրառել է ՀՕ սահմանված նվազագույն ամորտիզացիոն ժամկետը:

4. Արևային կայանների տեղադրման աշխատանքների ինքնարժեքում մասնավորապես ներառվել է.

4.1. հաշվետու տարվա ներքոթվարկյալ արտադրական ծախսումները .

4.1.1. սույն խնդրի 3-րդ կետում նշված արտադրական տարածքի հաշվապահական հաշվառմամբ հաշվարկված մաշվածության ծախսը,

4.1.2. արտադրական աշխատակիցների աշխատավարձի գծով 89,150 հAMD ծախսումները, ներառյալ աշխատակիցների համար 7,450 հAMD հաշվարկված չօգտագործված արձակուրդի պահուստը,

4.1.3. արտադրական աշխատակիցներին համար հաշվարկված 900 հAMD պարգևավճարը,

4.1.4. 113,200 հAMD արտադրական նյութական ծախսումներ, որում ներառված են 15,630 հAMD նախորդ տարում միկրոձեռնարկատերերից կատարված ձեռքբերումներ,

4.1.5. արտադրական հիմնական միջոցների, բացառությամբ արտադրական տարածքի, հաշվապահական հաշվառմամբ մաշվածության 15,870 հAMD ծախսը, որը 5,380 հAMD-ով պակաս է դրանց հարկային հաշվառմամբ հաշվարկված մաշվածության ծախսից, ինչպես նաև այդ հիմնական միջոցների վրա հաշվետու տարվա վերջին օրը կատարված 2,350 հAMD ընթացիկ ծախսումները, որոնցից 1,370 հAMD ծախսումը հարկային նպատակով կապիտալացվել է,

4.1.6. աշխատանքի հիմնական վայրից մինչև 30 կմ հեռավորության վրա գտնվող հաճախորդների բնակավայրեր գործուղման մեկնած աշխատակիցներին որպես հատուցում տրամադրված 2,230 հAMD օրապահիկ և 1,230 հAMD ճանապարհածախս,

4.1.7. 950 հAMD քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձի գործուղման հետ չկապված կեցության ծախսումներ, որոնք ներառված չեն պայմանագրով նախատեսված վարձատրության մեջ,

4.1.8. 1,950 հAMD աշխատակիցներին տրամադրված սննդի ծախսումներ,

4.2. հաշվետու տարվա սկզբի դրությամբ 138,000 հAMD անավարտ աշխատանքների ինքնարժեքից հաշվետու տարում ավարտվել են 36,940 հAMD ինքնարժեքով աշխատանքները, որոնց հարկման բազան կազմել է 34,850 հAMD,

4.3. հրապարակային պայմանագրով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում 4,390 հAMD երաշխիքային սպասարկման ծախսեր:

5. Արևային կայանների բաղադրիչների ինքնարժեք ինքնարժեքը ներառում է մասնավորապես .

5.1. առանց հատուցման գրադարանին տրամադրած արևային պանելների 8,450 հAMD արժեք,

5.2. ձեռքբերման ինքնարժեքից 7,650 հAMD գումարով պակաս արժեքով մատակարարված արևային կայանների բաղադրիչներ,

6. Վարչական ծախսերը մասնավորապես ներառում են .

6.1. Աշխատակիցների կողմից օգտագործվել է նախորդ տարում հաշվեգրված չօգտագործված արձակուրդային հատուցման պահուստից 2,850 հAMD,

6.2. 6,540 հAMD ներկայացուցչական ծախսեր,

6.3. 1,860 հAMD տույժերի գումար, որից 1,540 հAMD հաշվարկվել է հաճախորդներին իրենց հետ

կնքված պայմանագրերի համաձայն, իսկ մնացածը՝ հարկերը ՀՕ սահմանված ժամկետներից ուշ վճարելու համար,

6.4. սույն խնդրում շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով նորմավորվող ծախսերի՝ նորմաները գերազանցող մասերից չփոխհատուցվող եկամտային հարկի գումարներ չեն հաշվարկվել:

7. Իրացման և մարկետինգային ծախսերը ներառում են մասնավորապես ՀՀ տարածքից դուրս գործուղման մեկնած աշխատակիցներին որպես հատուցում տրամադրված 9,850 հAMD գործուղման ծախսեր, ներառյալ 5,750 հAMD փաստացի և առանց հիմնավորող փաստաթղթերի կատարված գիշերավարձի ծախսեր,
8. 5,590 հAMD տոկոսային ծախսը հաշվարկվել է Ընկերության կողմից վարկային կազմակերպությունից վերցրած վարկի գծով, իսկ մնացածը՝ Ընկերության հիմնադրի կողմից ստացված փոխառության գծով: Հարկային տարվա վերջին օրվա դրությամբ առկա, հարկային առումով սեփական կապիտալը կազմել է 4,350 հAMD:
9. Ոչ արտադրական ծախսերը կազմված են շահագործման մեջ չգտնվող արտադրական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներից:
10. Ընկերության կողմից նախորդ տարվա համար ներկայացված շահութահարկի հաշվարկով հարկային վնասը կազմել է 12,360 հAMD՝ հաշվի առած սույն խնդրի 1-ին կետի տեղեկատվությունը:

Շահութահարկի հաշվարկը Ընկերությունը ներկայացրել է 10/03/2025թ. -ին:

Ընկերության 2024թ. -ի 4-րդ եռամսյակի ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների գումարը կազմել է 135,700 հAMD:

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել.

- Եթե ուղղակի նշում չկա, ապա համարել, որ նվազեցումների (ծախսերի, կորուստների, այլ նվազեցումների) փաստաթղթերով հիմնավորվածության պահանջը հարկային հաշվառման մասով բավարարված է:
- Հարկային հաշվառման մասով հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները հաշվարկելու համար Ընկերությունը կիրառում է ՀՀ Հարկային օրենսգրքով թույլատրելի ամորտիզացիոն բոլոր հնարավոր նվազագույն ժամկետներ ընդունելու հնարավորությունը՝ եթե այլ բան ասված չէ խնդրում:

Պահանջվում է վերը նշված տվյալների հիման վրա հAMD-ով հաշվարկել.

- ***հաշվետու տարվա հարկվող շահույթը (վնասը),***
- ***շահութահարկի գումարը,***
- ***պետական բյուջե վճարման ենթակա շահութահարկի գումարը***
- ***հաշվետու տարվան հաջորդող տարվա 1-ին եռամսյակում վճարվելիք շահութահարկի կանխավճարի գումարը:***

/30 միավոր/

Խնդիր 2. Ավելացված արժեքի հարկի վերաբերյալ

«Վերելք» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է ԱԱՀ վճարող առևտրային կազմակերպություն: ԱԱՀ-ի հաշվարկման նպատակով՝ Ընկերությունը, ըստ գործունեության տեսակների, հարկման օբյեկտների կամ հարկման բազաների կամ հարկի գումարների կամ եկամուտների կամ դրանց ստացման հետ կապված՝ Օրենսգրքով սահմանված նվազեցումների կամ հաշվանցվող (պակասեցվող) գումարների հաշվառումը իրականացնում է առանձնացված եղանակով, եթե առանձնացված հաշվառում վարելը հնարավոր է: Ընկերությունը 2025թ.-ի հուլիս ամսին (այսուհետ՝ հաշվետու ամիս) իրականացրել է հետևյալ գործարքները.

1. Արտահանել է պատրաստի արտադրանք 60,870 հAMD արժեքով, որից 1,960 հAMD արժեքը կազմել է Ընկերության տարածքում պատրաստի արտադրանքի փաթեթավորման աշխատանքների արժեքը:
2. ՀՀ տարածքում մատակարարել է 30,870 հAMD (առանց ԱԱՀ) արժեքով շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված պատրաստի արտադրանք, որից 3,750 հAMD (առանց ԱԱՀ) արժեքով դուրս գրված հարկային հաշիվը հաճախորդի կողմից չի ընդունվել և էլեկտրոնային եղանակով չի ստորագրվել: Կառավարության սահմանած չափանիշները բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արժեքը կազմել է՝ 1,470 հAMD (առանց ԱԱՀ), որը նախորդ ամիսներին ձեռք էր բերվել ԱԱՀ-ով:
3. Վաճառված ապրանքի դիմաց հաճախորդի կողմից փոխանցումն ուշացնելու համար կազմել է տույժի հաշվարկի ակտ 240 հAMD գումարի չափով:
4. Հաճախորդի հետ կնքված պայմանագրի պայմանների համաձայն երաշխիքային ծառայությունների շրջանակում որակին չհամապատասխանող արտադրանքի անհատույց փոխարինում 230 հAMD արժեքով, որի համար նախորդ ամիսներին հաշվանցել է 17 հAMD ԱԱՀ:
5. Ոչ ռեզիդենտ կազմակերպությանը 2,560 հAMD գումարով տրամադրված փոխառության համար հաշվարկված 140 հAMD տոկոսի համար դուրս է գրել հաշվարկային փաստաթուղթ:
6. 9,230 հAMD և 3,170 հAMD հաշվեկշռային արժեքներով դուրս գրված հիմնական միջոցներից առաջինը վաճառել է 8,560 հAMD (առանց ԱԱՀ) վաճառքի գնով, իսկ մյուսը լուծարել է և առանձին մասերը վաճառել 2,750 հAMD (առանց ԱԱՀ) վաճառքի գնով: Նշված հիմնական միջոցները ձեռք էին բերվել ԱԱՀ-ով:
7. Ոչ ռեզիդենտ կազմակերպությանը օտարել է այլ ՀՀ կազմակերպության կանոնադրական կապիտալում բաժնեմասի սեփականության իրավունքը 14,590 հAMD գումարով:
8. Նախորդ ամսում ներմուծված և որակին չհամապատասխանող 8,940 հAMD արժեքով նյութերի 40%-ը Ընկերությունը ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբերվող մաքսային ընթացակարգով արտահանել է մատակարարին: Նյութերի ներմուծման ժամանակ հաշվարկված ԱԱՀ կազմել էր 1,910 հAMD, որը վճարվել էր նախորդ ամսում:
9. ՀՀ տարածքից «Վերանշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով 22/07/25թ.-ին վերանորոգման նպատակով արտահանել է 4,230 USD արժեքով սարքավորում (մաքսային արժեքը՝ 1,640 հAMD):
10. 30/07/25թ.-ին (սահմանը հատելու օր) ԵՏՄ անդամ հանդիսացող երկրի մատակարարից ներմուծել է նյութեր՝ ստանալով 12,350 USD գումարի հաշիվ, որը կազմված էր 1,340 USD տրանսպորտային ծառայության արժեքից, 5,850 USD ԱԱՀ-ից ազատված, իսկ մնացած գումարը ԱԱՀ-ով և բնապահպանական հարկի 1.5% դրույքաչափով հարկվող նյութերի արժեքից: Հաշվարկված ԱԱՀ-ն վճարվել է 01/08/25թ.-ին:
11. Մատակարար ոչ ռեզիդենտ կազմակերպությունից 21/07/25թ.-ին ներմուծված և «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով մաքսազերծված նյութերի համար ստացել է 11,790 USD արժեքով հաշիվ, որի 3,230 USD արժեքը կազմել է տրանսպորտային ծառայությունը, ինչից առանձանացվել է ՀՀ տարածքում 210 USD բեռնափոխադրման արժեքը: ԱԱՀ-ով հարկվող

ապրանքի մաքսագերծման համար հաշվարկել է բնապահպանական հարկ 2% դրույքաչափով, մաքսատուրք 10% դրույքաչափով և ԱԱՀ, իսկ մաքսային մարմինների կողմից հաշվարկված ապրանքի մաքսային արժեքը կազմել է 5,050 հAMD:

12. Ստացված հաշիվ վավերագրերի հանրագումարը կազմել է 8,420 հAMD, հարկային հաշիվների առանց ԱԱՀ հանրագումարը՝ 25,960 հAMD, իսկ ԱԱՀ-ը՝ 4,960 հAMD: Ֆիզիկական անձանցից կատարված գույքի գնումների արժեքը կազմել է 2,220 հAMD, ինչից պահվել է 10% եկամտային հարկ, իսկ ՀԴՄ կտրոնների արժեքը՝ 1,830 հAMD (ներառյալ ԱԱՀ): Հաշվարկային փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրվել են 25/08/25թ. -ին:
13. 30/07/25թ. -ին էլեկտրոնային եղանակով ստորագրել է 3,720 հAMD (ներառյալ ԱԱՀ) մատակարարներից ստացված՝ ձեռքբերումների նվազեցման վերաբերող ճշգրտող հարկային հաշիվներ:
14. Ի լրումն սույն խնդրի 12-րդ կետի 31/07/25թ. -ին էլեկտրոնային եղանակով ստորագրել է մատակարարի կողմից 31/07/25թ. -ին դուրս գրված 5,350 հAMD (ներառյալ ԱԱՀ) հարկային հաշիվը, որի մատակարարման ամսաթիվը նշվել է 04/08/25թ. .:
15. Մաքսային մարմնի կողմից կազմված հետբացթողումային ստուգման ակտով արձանագրվել է նախորդ ամսվա ներմուծման մաքսային հայտարարագրում պակաս հայտարարագրված և վճարված 280 հAMD գումարով ԱԱՀ, որը վճարվել է հաշվետու ամսում:
16. Ոչ ռեզիդենտ կազմակերպությունից 30/07/25թ. -ին ստացել է արտադրական ծրագրի սպասարկման ծառայություն 140 USD արժեքով և 11/08/25թ. -ին դուրս գրել հաշվարկային փաստաթուղթ:
17. Հաշվետու ամսվա սկզբում պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարը կազմել էր 7,190 հAMD, որից 3,680 հAMD ԱԱՀ-ի վերադարձման ենթակա գումարը 07/07/25թ. -ին մուտքագրվել է միասնական հաշվին :

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել .

- ՀՀ ԿԲ հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված 1 USD միջին փոխարժեքներն են

Ամսաթիվ	ՀՀ դրամ	Ամսաթիվ	ՀՀ դրամ	Ամսաթիվ	ՀՀ դրամ	Ամսաթիվ	ՀՀ դրամ
19/07/25	384.2	22/07/25	383.9	30/07/25	383.8	08/08/25	383.6
21/07/25	383.8	29/07/25	383.7	01/08/25	383.5	11/08/25	383.5

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել.

- *Եթե ուղղակի նշում չկա, ապա բոլոր դուրս գրված և ստացված հարկային հաշիվները հանդիսացել են օրենսգրքով սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվներ, և ԱԱՀ հաշվանցման իրավունքը օրենսգրքով սահմանված կարգով համարվել է բավարարված:*

Պահանջվում է վերոնշյալ գործարքների հիման վրա հAMD-ով հաշվել .

- *հաշվետու ամսվա բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը (կամ բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը),*
- *լրացնել այդ նույն հաշվետու ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը:*

Հաշվարկում պահանջվող Օրենսգրքի հոդվածին, մասին, կետին հղում կատարելու դաշտերում նշել գործարքների կետերը (հաշվարկի ձևը կցվում է):

/25 միավոր/

Խնդիր 3. Եկամտային հարկ

Հարկման ընդհանուր համակարգում գործող «Մրցավագ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի ապրիլ ամսին (այսուհետ՝ հաշվետու ամիս) իրականացրել է հետևյալ գործարքները.

1. սույն աղյուսակի տեղեկատվության համաձայն հաշվարկել է աշխատակիցների աշխատավարձ՝ **AMD**

հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն	Սոցիալական վճար	Պայմանագրային աշխատավարձ	Զուտ աշխատավարձ
1	Մարկոսյան Տրդատ	Տնօրեն	Վճարող է	2,140,000	
2	Վարդանյան Կարինե	Հաշվապահ	Վճարող է		510,000
3	Գրիգորյան Տիգրան	Ինժեներ	Վճարող է		1,150,000
4	Մկոյան Միսակ	Բանվոր	Վճարող չէ	280,000	

2. աշխատակիցներին լրացուցիչ հաշվարկվել և (կամ) վճարվել են հետևյալ եկամուտները.

- 2.1. Ընկերության բանկային հաշվից փոխանցվել է Մարկոսյան Տրդատից վարձակալված ավտոմեքենայի 100,500 AMD գույքահարկը:
- 2.2. Ընկերության բանկային հաշվից փոխանցվել է Վարդանյան Կարինեից վարձակալված ավտոմեքենայի 5 ամսվա դիմաց 700,000 AMD վարձակալական վճարը:
- 2.3. Գրիգորյան Տիգրանի կողմից Ընկերությանը տրամադրված փոխառության դիմաց 320,000 AMD վճարման ենթակա (առանց եկամտային հարկի) տոկոսային պարտավորությունից փոխմարվել է հաշվետու ամսում Գրիգորյան Տիգրանին վաճառված ապրանքի դիմաց 200,000 AMD պարտքը:
- 2.4. Աշխատակիցների միջև կազմակերպված մրցույթի արդյունքում Մկոյան Միսակին տրամադրել է 80,000 AMD արժեքով իրային մրցանակ:

3. Այլ ֆիզիկական անձանց հետ գործարքներ.

- 3.1. Ընկերության տնօրենի կնոջ՝ Մարկոսյան Անի համար ապահովագրական կազմակերպությանը վճարել է առողջության տարեկան ապահովագրավճար 150,000 AMD:
- 3.2. Ընկերությունը Նիկողոսյան Արմանից ձեռք է բերել այլ կազմակերպության բաժնետոմսեր և բանկային փոխանցմամբ վճարել դրանց դիմաց 3,560,000 AMD: Նիկողոսյան Արմանն այդ բաժնետոմսերը նախորդ տարում ստացել է այլ կազմակերպության կանոնադրական կապիտալում շինության ներդրման դիմաց:
- 3.3. Ընկերության 100% մասնակից ՀՀ քաղաքացի Մանվելյան Սահակին բանկային փոխանցմամբ վճարվել է 2017թ. -ի համար հայտարարված 2,500,000 շահաբաժին:
- 3.4. ՌԴ տարածքում ոչ ռեզիդենտ Նատաշա Տիխոնովայից ձեռքբերված նութբուքի դիմաց վճարել է վերջինիս 1,200 USD (գնման կուրսը 1 USD=386 AMD), որի համար կազմվել է ներմուծման մաքսային հայտարարագիր:

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել.

- *Խնդրի պահանջների մեջ եկամտի չվճարված լինելու պայմանի բացակայության դեպքում համարել, որ հաշվարկված եկամուտն ամբողջությամբ վճարված է:*

Պահանջվում է հաշվարկել.

- *Ֆիզիկական անձանց եկամտային հարկով հարկման բազաները, ինչպես նաև սույն խնդրի 1-ին կետում գուտ աշխատավարձ չունեցող աշխատակիցների վճարման ենթակա աշխատավարձի չափերը AMD-ով,*
- *Ընկերության հաշվետու ամսվա բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի, սոցիալական վճարի և դրոշմանիշային վճարի գումարները AMD-ով:*

Խնդիր 4. Ոչ ռեզիդենտի շահութահարկի վերաբերյալ

ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը (այսուհետ՝ Ընկերություն) կատարել է հետևյալ գործարքները .

1. ՀՀ տարածքում կազմակերպել է էքսպո ցուցահանդես՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը դուրս գրելով 3,560 hAMD արժեքով հաշիվ:
2. ՀՀ տարածքից դուրս կադրերի վերապատրաստման դասընթացի համար ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը դուրս է գրել 1,860 hAMD արժեքով հաշիվ:
3. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունից նախորդ տարում 15,630 hAMD արժեքով ձեռքբերված պարտատուները (ՀՀ գործող ֆոնդային բորսայում չցուցակված) վաճառել ՀՀ ֆիզիկական անձի 18,760 hAMD արժեքով:
4. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը մատակարարել է 32,800 hAMD արժեքով հոսքագիծ, որի ՀՀ տարածքում մոնտաժման և տեղակայման համար տրամադրել է համապատասխանաբար 1,300 hAMD և 2,120 hAMD գումարների հաշիվներ:
5. ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձին տրամադրած փոխառության դիմաց 3,890 hAMD տոկոսային պարտքի մարման դիմաց նրանից ստացել է այլ կազմակերպության բաժնետոմսեր:
6. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունից բանկային փոխանցմամբ ստացել է 8,940 hAMD շահաբաժին:
7. Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձին տրամադրել է ՀՀ տարածքում գտնվող բնակարանը վարձակալությամբ՝ նախապես ստանալով կանխավճար 1,240 hAMD:
8. ՀՀ տարածքում կառուցվող բազմաբնակարան շենքի տեխնիկական վերահսկողության իրականացման դիմաց ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը դուրս է գրել 2,560 hAMD արժեքով հաշիվ:
9. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունից ստացել է 11,430 hAMD կանխավճար ՀՀ տարածքից դուրս ապրանքի մատակարարման համար:
10. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը դուրս է գրել 3,150 hAMD բեռնափոխադրման հաշիվ ՀՀ տարածքից դուրս ապրանքի տեղափոխման դիմաց:
11. Պայմանագրի լուծման պատճառով ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը հետ է փոխանցել մեկ ամիս առաջ ստացված խորհրդատվական ծառայությունների մատուցելու դիմաց ստացված 830 hAMD կանխավճարը:

Սույն խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել .

- *ՀՀ և Ընկերության ռեզիդենտության պետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագիր առկա չէ:*

Պահանջվում է առանձին նշել գործարքներից առաջացող ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարները hAMD-ով, որոնք հաշվարկվում և պահվում են՝

- *հարկային գործակալների կողմից,*
- *Ընկերության կողմից:*

/15 միավոր/